ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր տարի Հայաստանյայց Եկեղեցին մեծ շուքով է նշում Սրբոց Թարգմանչաց տոնը: Այս տարի ևս բազմամարդ էր Օշականի Մեծ Մաշտոցի անունը կրող եկեղեցին: Պահը հանդիսավոր էր նաև նրանով, որ նույն եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, իրենց քահանայական կոչումն ստացան ու ձեռնադրվեցին հոգևոր ճեմարանի շրջանավարտ երկու բարեշնորհ սարկավագներ՝ Սարգիս Գուտուզյանն ու Գարսևան Երանյանը:

Նախորդ օրը, հոկտեմբերի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում տեղի էր ունեցել «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ըստ Ձեռնադրության Մոշտոցի՝ խարտավիլակությամբ Տ. Նավասարդ աբղ. Կճոյանի:

Հոգեշնորհ հայր սուրբը վկայել էր նորընծաների հոգևոր ու մտավոր պատրաստվածության մասին՝ արժանանալու քահանայական ձեռնադրության:

Հոկտեմբերի 14-ին Ս. Մշտոց եկեղեցում պատարագ մատուցեց Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: Պատարագի ընթացքին տեղի ունեցավ անվանակոչության ու օծման արարողությունը: Սարգիս սարկավագը վերանվանվեց Տ. Մխիթար քահանա, իսկ Գարսևան սարկավագը՝ Տ. Մկրտիչ քահանա: Նորընծաները տվեցին իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

«Ողջոյն»-ի պահին Տ. Հուսիկ սրբազանը ողջագուրվեց և շնորհավորեց նորընծաներին: Նրան հետևեցին բոլոր «քահանայք և սարկաւագք»: Ապա պատարագիչ սրբազան հայրը արտասանեց ոգեշունչ քարոզ՝ անդրադառնալով Հայ Եկեղեցու այսօրվա դերին ու հայ հոգևորականի գործունեության նշանակությանը մեր ժողովրդի կյանքում: Սրբազան հայրը մաղթեց նորընծաներին՝ պատվով շարունակելու նախնյաց սուրբ ավանդությունները:

Ս. պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Ս. Մաշտոց եկեղեցու քահանայից դասը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Նույն օրը, երեկոյան, կատարվեց «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգը, և Տ. Մխիթար քահանային տրվեց կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղար:



Զեռնադրության արարողությունից մի պահ

Զեռնադրության առթիվ Վեհարանում նորընծաներին ընդունեց Վեհափառ Հայրապետը, շնորհավորեց նրանց և մաղթեց, որ լինեն հավատավոր սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծաներին, մաղթելով, որ լինեն «հովիվ քաջ» և անմնացորդ նվիրվածությամբ ծառայեն աշխարհասփյուռ մեր ժողովրդին: